



ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, ՏՐ. Մ. Ս. Գաբրիելյան

ԱՌԱՋԱՐԿ

ԱՌ ՀԱՅՐԵՆԱՅԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՍ

Սրտառուչ են վերջարանական յորդորք Շիբակոյի թղթակցութեան գործնականութեան զգածուելով պիտի կարգան «Հայքի» ներկայ թուոյ մէջ: Թղթակիցն կ'առաջարկէ ինչ որ արդէն Հայք թեւադրած է իբրեւ լաւագոյն միջոց. — այսինքն զկեդրոնն կազմակերպել ո՛չ ընդհանուր քուէարկութեամբ Հայոց, որպէս էր սկզբնական առաջարկն, այլ հայրենասիրական միութեանց պատուիրակներու քուէոյն: (Տես «Հայք» Բ. տարի երես 130, «Հայկ. ինքնավարութեան փորձն Հայ գաղթականութեանց մէջ»):

Արդարեւ մի քանի գործիչներ քաշուեցան ասպարիզէն և հայրենասիրական Միութիւն մ'ալ իբրեւ փտած տունկ վերջերս ի մեծ ապշութիւն պարզամասց և ի ցնցումն կամաւ կուրացելոց, կործանեցաւ: Սակայն կըմնան դեռ բազում ընկերակցութիւններորոց անուն համեստ է և սիրտըն անկեղծ: Եւ կը ճանաչեն թէ ազգային կեդրոնական մարմին մի կարող կը լինի մեծագոյն ևս ազդուութեամբ և զօրութեամբ գործել:

Ուրեմն Հնչակեան և ոչ-Հնչակեան, մօտաւոր և հեռաւոր ամենայն միութեանց անխտիր հրաւէր կուղղեմք, ծանուցանել

խմբագրութեանս իրենց յօժարութիւնն առ այս որքան հնար է փութով, որպէս զի ըստ այնմ կարգադրութիւններ կատարեմք պատուիրակաց ընդհանուր ժողովն անյապաղ կոչել կամ կոչել տալու ի քաղաք մի եւրոպական:

Ալ ժամանակ է որ այս գործնական քայլ առնուն այն ամենայն որք համոզուած են թէ կեդրոնացումն կարեւոր է տալու համար մեր ազգային գործոյն մեծագոյն հնարաւոր ոյժն և իմաստութիւն միանգամայն:

ՀՐԱԻ ԷՐ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԻՐՈՒԹԵԱՆ

Զինուորական կրթութեան և մասնաւորապէս հրացանաձգութեան վարժուելու փափաքող Նիւ-Եորքի և մօտակայից հայ երիտասարդներն թող հաճին խմբագրութեանս գրով հաղորդել իրենց յօժարութիւնն:

Զինուորական կրթիչ մի արդէն պատրաստ է հայ խումբն մարզելու. կը մնայ որ խմբին մասնակցելու լրջօրէն բաղձացող իւրաքանչիւր երիտասարդ (կամ ինքզինքն երիտասարդ զգացող հայ մարդ) մեզ ծանուցանէ իւր անուն ու հասցէ, որպէս զի իրենց հրաւէր ուղղեմք գալ սկսելու:

Կը խնդրեմք որ մեր այս հրաւիրին վաղ ընդ փոյթ պատասխանեն յօժարամիտք մինչև մէկ շաբաթ:

ՀԱՅՔ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցե
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," Լն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջարկ առ Հայրենասիրական Միու-
թիւնս.— Հրաւէր Զինուորական Կըթ ութեան.—
Հայ Դատն եւ Հայ Կուսակցութիւնք.— Մի-
ութիւն Գոյացնելու Գործնական Կերպ մը.—
Նամակ Խարբերդէ.— Բալուէն Աղաղակ մի.—
Նամակ Եգիպտոսէ.— Հայ Լրագրութեան Հա-
րիւրամեակն.— Մնալ Յօտարութեան թէ վե-
րադառնալ Հայրենիք.— Պատասխան.— Ամե-
րիկայի Հայերն Ինչպէս Առևտուր Կ'անեն.—
Ամերիկայի Հայերն և Օտար Անուամներ.— Թա-
կազին Արհեստներ Հայոց Համար.— Միամե-
սայ Հաշուեկշիռ Ելևմտից Մ. Փրկիչ Եկեղեցւոյ
Ուստըրի.— Նամակ Վանէ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th Փողոց
Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով : Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր :

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

Որպէս զի բաւական եղելութիւններ
ի ձեռին կարենամք թէ ամերիկայի մամ-
լոյն մէջ և թէ կառավարութեան առջև աւե-
լի ևս ջատագովել պաշտպանութեան իրաւ-
ունքն զոր ամերիկացի եղած Հայերն ու-
նին և պէտք է վայելեն թուրքիա դառ-
նալէ վերջ, կը խնդրենք որ մեզ հաղոր-
դեն գրաւորապէս և մանրամասն ճշդու-
թեամբ իրենց փորձառութիւն ամեն այն ա-
մերիկեան քաղաքացի դարձած Հայեր ո-
րոց ի թուրքիա գլացուած է Միացեալ
Նահանգաց ներկայացուցիչներու պաշտ-
պանութիւնն, կամ որք ստիպուած են ի-
րենց ամերիկեան անցագիր չցուցնել, կամ
որոնց ձեռքէն խլուած է քաղաքացիու-
թեան թուղթն Լն Լն :

*

* *

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

(«Հայք»էն հանուած)

Մ. Ս. ԳԱՐԻԻԷԼԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ
Հանրային ուշադրութիւնն աւելի զբաղե-
ցունելու և կարող գորիչներն նոյն կենա-
կան խնդրոյ վերայ շարժել տալու նպա-
տակաւ ի լոյս ընծայուած է այս ուսում-
նասիրութիւն : Գինն է 50 սանթիմ կամ
10 սէնթ :

* *

Լոնտոնեան Լ'առմէննիի Հասցէն է
De Vere Gardens W. London
ENGLAND

Կը խնդրենք որ մընի օրադրի կոմ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եգ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան : Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

ՀԱՅ ԴԱՏՆ

Ե Ի

ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Հետաքրքրական է քննել թէ ի՞նչ ընկերութիւններ, կուսակցութիւններ կան այժմ Հայոց մէջ, և թէ ինչով դոքա կը տարբերին իրարմէ:

Ա.

1. Նախ յիշենք զայն որ լոկ Հայերէ կազմեալ չէ:

ԱՆԳՆԵՒԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ Ի ԼՈՆՏՐԱ, տարիներէ ի վեր կազմեալ Հայաստէր մեծանուն ՃէՅՄՍ ՊՐԱՅՍԻ նախաձեռնութեամբ: Ունի 25 Անգլիացի անդամներ որոց կէսն անգլիական խորհրդարանին անդամ են: Տէր Կարապետ Յակոբեան, Տէր Քալանթարեանց բժշկապետ և Տէր Պետրոս Աղանուր են Հայ անդամք:

Այս ընկերակցութեան նպատակն է ոչ-յեղափոխական միջոցներով աշխատիլ գործադրել տալ Պէռլինի դաշնագրոյն 61-րդ յօդուածն: Կրկին և կրկին յայտարարած է թէ ինքն չի հաւանիր ուժանակով կենաց փնտ հասցունելու և Սուլթանին անձին և գահուն դէմ յարձակում անելու:

Այս ընկերակցութեան բերանն էր ՀԱՅԱՍՏԱՆ ամսաթերթն, Փռանսերէն և Հայերէն, որ դադրեցաւ: Այդ թերթ գրեւորապէս ծառայութիւն մատոյց մեր դատին Պարոնակութիւնն բաւական ուշադրութեան արժանի էր:

Ընկերութեան անդամներն Խորհրդարանի մէջ ամեն պատեհ առիթ կը գործածեն Հայոց վերայ խօսելու և հարցապնդումներ անելու: Նշանակելի է թէ դոցա մէջ թէ թորիներ կան և թէ Հուրիկներ, և Հայկական խնդիրն կուսակցութեան գործի անելէ կը զգուշանան:

Անգլահայկական Ընկերակցութիւնն իւր տեսակին մէջ պատուական է և մեզ համակրելի:

2. ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ Փարիզու Սակաւաթիւ բայց լուրջ

անդամներէ բաղկացեալ մարմին մ'է այս, և ազգային դատին զանազան եղանակօք, խորհրդով և դրամական օգնութեամբ նըպաստ մատուցանել կ'աշխատի ոչ սակաւ տարիներէ ի վեր:

3. ՀԱՅՈՑ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ Սուրապայայու, ի ճաւա: Այս ալ նախընթացին նման մարմին մ'է, Հայրենիքէն հեռու բայց Հայ դատին համար տրոփող պրտերէ կազմեալ կայ, և ըստ կարի կ'օգնէ Հայոց փրկութեան գործոյն:

4. ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ Նիւ Եորքի, հաստատեալ ի 4 Ապրիլի, 1891, այն մասնաւոր նպատակաւ որ աշխատի վասն հաստատման Տիեզերական Ազգային Յանձնախմբի մի, որպէս զի այլ և այլ ընկերակցութեանց ոյժն ի մի կեդրոնացած՝ վարէ Հայոց Հայրենասիրական ջանքերն: Այս Յանձնախումբ Ամերիկայի այլ և այլ քաղաքաց մէջ ունի քոյր յանձնախմբեր, ինչպէս նաև ուրիշ երկրաց մէջ իւր նպատակի համակրող Հայրենասիրաց մեծ թիւ մի:

5. ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱԼԻԿԱԹՅԻ, կազմակերպեալ է 1890ին, և ըստ կարի տշխատած է այլ և այլ առթիւ նըպաստելու ազգային դատին:

6. ՀԱՅԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԵԿԱՅԻ, նորածին փոքր մարմին մ'է մեծ անունով և մեծնալու տենչով: Կը մաղթենք որ լուրջ Հայրենասիրի ղեկավարութիւնն վայելելու բաղդն ունենայ և արդարեւ ծառայէ Հայ դատին:

7. ՀՆՁԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ, գոյութիւն ունեցող յեղափոխական կուսակցութեանց քան զամենայն բազմաճղին և կանոնաւորն է, ռուսահայ ռուսաոգներէ հիմնեալ, որոյ բերանն է «Հնչակ» ամսաթերթն: Սոցա մասին «Հայք» մէջ բազում անգամ խօսած եմք և լաւ ու յոռի կողմերն պարզած:

Զպիտի ջանամք աստ կատարեալ ցանկ մի ներկայացունել գոյ եղող բոլոր փոքր ու մեծ Հայրենասիրական ընկերակցութեանց: Կ'արժէ, սակայն, որ յիշեմք վախճանեալ երկու ընկերութիւններ, մին ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ կոչուածն, որ ի մեծ ապշութիւն պարզամտաց կործանեցաւ վերջերս չորեքամեայ աճուլ գոյութենէ մի յետոյ: Թէ ի՞նչու այդ ընկերութիւն ամուլ մնաց և ինչո՞ւ այդ խայտառակ վախճանին հասաւ, հրա-

հանգիչ և խրատալի դաս մի կրնայ լինիլ, զոր սակայն մեք մասնաւոր փափկանկատութեամբ մի՛ յօրինելէ ձեռնպահ կը մնամք :

Աւելի կարեւոր և մեծ ընկերութիւն մ'ալ կործանեցաւ, այն ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ որոյ բերանն էր «Դրօշակ» թերթն : Այդ ընկերութիւն կազմուած էր Գում-Գարու յի դէպքէն յետոյ, երբ Ռուսահայք կրակոտած էին : Ոչ սակաւ կարեւոր անձնաւորութիւններ ի Ռուսահայս համակրեցան դժաւ, և իբր 100,000 ռուբլի հանգանակուեցաւ, Սակայն Դրօշակ մի քանի թիւ միայն հրատարակուեցաւ, դաշնակցութիւնն քայքայեցաւ շուտով և դրամներն ալ այլ և այլ որկորներու մէջ ընկուզան :

Բ

Այս և այսպիսի ընկերութեանց ամենուն աւնպատակն է Հայկական խնդրոյն բարւոք լուծման նպաստել : Ի հարկէ՝ ամենն ալ ճիշդ նոյն մտօք չեն ըմբռներ խնդիրն և ճիշդ նոյն միջոցներ չեն գործածեր կամ յանձնարարեր, բայց և այնպէս կարելի է ասել թէ ամենն ալ սկզբամբ կ'ընդունին թէ ճշդ յօգուածին գործադրութիւնն պէտք է լինի Հայկական Գաւառաց ինքնօրինութեամբ ընդգերիշխանութեամբ Սուլթանին, և թէ Եւրոպիոյ միջամտութիւնն հարկաւոր է զՍուլթանն ստիպելու համար ի գործադրութիւն իւր դաշնագրական յանձնառութեանց ի մասին Հայոց :

Գալով այն միջոցներուն որովք պարտ է Եւրոպիոյ միջամտութիւնն գրգռել, կարծիք քիչ սի կը զանազանին : Միութիւնք ոմանք աւելի դիւանագիտական դիմումներու կարեւորութիւն կուտան, թէ և այս մասին վերջին տարիներու յուսախաբութիւնք շատերն հրաժարեցուցած են այդ կարծիքէն : Ոմանք ալ, Եւրոպիոյ հանրային կարծիքն ի նպաստ Հայոց յուզելու հարկն կը ջատագովեն, և առայս լրագրաց մէջ հրատարակութիւններ անել կուտան, և ժողովրդային բանախօսութիւններ ևս երբեմն երբեմն կը տրուին : Ապահովապէս կրնամք ասել թէ չկայ ընկերակցութիւն մի որ քաղաքակիրթ աշխարհի հանրային համակրանքն չահելու հարկն անհրաժեշտ չհամարի : Անցողակի պիտեւ տամք աստ թէ հակառակ այս

ընդհանուր համոզման, Հայք մինչև ցարդ շատ մեծ ջանքեր անելչեն կրցած ժողովրդոց կարծիքն յուզելու յեւրոպա և յԱմերիկա :

Ընկերութեանց մէջ կարծիքի գլխաւոր տարբերութիւնն յեղափոխական միջոցներու մասին է : Ոմանք, այն է պահպանողականք, կ'ուեն թէ կը բաւէ մամլոյ և խօսքի միջոցաւ միայն Եւրոպիոյ միջամտութիւնն հայցել, ո'չ ցոյց և ո'չ երբէք ապստամբութիւն պէտք է մեզ, քանզի այդպէսով մեր խեղճ հայրենակցաց հարստահարութիւնք կը սաստկանան և անմեղներու բազմութիւն կը բանտարկուի ու կը տառապի : Իսկ ոմանք, այն է յեղափոխականք, կը պնդեն թէ Եւրոպիոյ հանրային կարծիքն մեր խնդրով զբաղեցունելու ազդուագոյն միջոցն է Հայաբնակ գաւառաց մէջ դժգոհութեան ցոյցեր անել երբեմն երբեմն, և երբ ժողովուրդն վարժուի ու պատրաստուի՝ ապստամբութիւն ևս առաւել կամ նուազ ընդարձակ սահմանի մէջ գործել՝ որպէս զի տէրութիւնք ստիպուին միջամտել ի նպաստ մեր : Զայս ասողներն յոյժ բազում են :

Դիտել պարտ է թէ յեղափոխականք կատարելապէս կ'ընդունին պահպանողականաց խաղաղ միջոցներուն անհրաժեշտ կարեւորութիւնն, մամլոյ և խօսքի միջոցաւ կատարուելիք ազդեցութիւնն հանրային մտաց վերայ : Բայց կը պնդեն թէ աղոր հետ միասին հարկ է որ Հայաստանի ժողովուրդն ալ իւր գերութեան լուծն թօթափելու առնական ջանքեր անէ և գիտակցութեան նշան տայ Եւրոպացւոց :

Սակայն յեղափոխականք ալ երկու մեծ կուսակցութեանց բաժնուած են. — Հնչակեան և ոչ-Հնչակեան : Հնչակեանք, մանաւանդ հիմնադիրք և գլխաւոր վարիչք, ընկերվարական-յեղափոխականներ են, Եւրոպիոյ մէջ կրթուած, և Թուրքիոյ հայ և թուրք ժողովրդոց զգալու և խորհելու կերպերուն քաջ տեղեակ չեն, և ուստի իրենց քաղաքականութիւն և ընթացք ծանր առարկութեանց տեղի կուտայ : Ոչ-Հնչակեաններ ցոյցի և յեղափոխական շարժման հարկն կ'ընդունին, բայց և միանգամայն կը զգան թէ ցոյցն իւր նպատակին ծառայելու և յեղափոխութիւնը փրկարար միջոց լինելու համար պէտք է որ ցոյցն խոհեմութեամբ կատարուի, և ապստամբական մեծ շարժումն ընդարձակ

պատրաստութեանց և արտաքին ձեռնտուութեան ևս շնորհիւ լինի:

Ի մի բան՝ ոչ-Հնչակեան յեղափոխականք աւելի դժուարին և ահաւոր գործ կը համարին յեղափոխութիւնն և ուստի աւելի ընդարձակ պատրաստութեանց պէտք կը տեսնեն, նաև կը բաղձան որ ներքին ու արտաքին գործիչք իրարու հետ գոնէ գաղտ հաղորդակցութիւն ունենան և սուրբ գործն ոչ թէ այս ինչ կամ այն ինչ ընկերակցութեան ձեռքն լինի այլ ընկերութեանց դաշնակցեալ և կեդրոնացեալ մէկ մեծ յանձնախմբին ղեկավարութեամբն յառաջ մղուի: Այսպէսով Հայ Հայրենասէրներ, Հայ Ժողովրդեան զգայուն մասերն այժմէն կազմակերպութեան, համերաշխութեան և ինքնավարութեան վարժուած կը լինին և նիւթական ու բարոյական ազդեցութիւնն ալ չատ աւելի հզօր կը լինի քան ու է առանձին կուսակցութեան:

Յեղափոխական այս երկու կուսակցութեանց մին, այսինքն Հնչակեանն աւելի կազմակերպեալ է և արդէն բուն Հայաստանի հողին վերայ գործել սկսած է: Ոչ-Հնչակեան կուսակցութիւնն առ այժմ իրարու համակիր բայց իրարմէ գրեթէ զատ ընկերութիւններէ կը բաղկանայ. Սոցա պարտականութիւնն է փութով աշխատիլ համահայկական միութիւն մի կազմաւորելու իրենց պատուիրակաց ձեռամբ, այնպիսի միութիւն մի որ իւր մէջ առնու հնչակեաններն ևս: Կը խնդրեմք որ հնչակեանք ևս անկեղծօրէն աշխատին այսպիսի մեծ դաշնակցութիւն մի յաջողցունելու: Բայց եթէ Հնչակեանք այս կեդրոնաձիգ շարժման քաջալերիչ չի հանդիսանան և ձեռնարկն վիժի, յայնժամ ոչ-Հնչակեան յեղափոխական ընկերակցութիւնք պիտի ստիպուին միանալ և կազմել մի մեծ կուսակցութիւն, որ, ըստ մեր հաշիւներու, հզօրագոյն կրնայ լինիլ քան զհնչակեանն:

Կը կրկնեմք ուրեմն մեր ջերմագին հրաւերն առ հնչակեան և ոչ-հնչակեան ընկերակցութիւնն անխտիր՝ որ հաճին ամենայն փութով հաղորդել Հ. Հ. Յանձնախմբին նիւ Եօրքի՝ հասցէիւ ՀԱՅՔԻ՝ իրենց պատրաստականութիւնն ներկայացուցիչ յղելու ի մի ընդհանուր ժողով որոյ պաշտօն պիտի լինի հիմնական ծրագրի մի վերայ համաձայնելով կեդրոնի անդամներ ընտրել քուէարկութեամբ:

Մի գանդաղիք, Հայեր, համոզումն ընդհանուր գոյացած է, ժամ է կեդրոնացման գաղափարն իրագործելու:

ՄԻՈՒԹԻՒՆ

ԳՈՅԱՑՈՒՆԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՐՊ ՄԸ

Ե՛ղբարք, Հայաստանի լուծը խորտակելու համար հսկայի զօրութեան կը կարօտինք. հարուածը ճիշդ ժամանակին, տեղւոյն և պէտք եղած ուժով տալ պարտինք:

Ազգի մի ճամարիտ զարգացման համար ազատութիւն անհրաժեշտ է: որչափ որ բնատուր ձիրքեր ունենանք, ճարտար գիտուն և խորհող մարդիկ ըլլանք, դեռ շատ վար կը մնանք ճամարիտ յառաջդիմութենէ, քանզի մեզ կը պակսի կամիլ, այսինքն խորհուրդը գործնականին վերածել: Այս վիճակիս մէջ եթէ կարելի ըլլայ յառաջդիմել, պիտի նմանինք Հռովմայեցւոյ ուսեալ և ճարտար գերիներուն: Մենք քաղաքացի կամ հպատակ չենք, գերի ենք: Չունինք ձայն, հնազանդիլ գիտենք, հարստահարեալ ենք և մեր հարստահարչաց բարօրութեան ակամայ կ'աղօթենք, չենք պաշտպանուիր, կը նախատուինք:

Մեզ համար ամենէն կարճ ճամբան ազատութիւնն է: Խորհինք և խօսինք և գործենք այս նպատակին համար:

Դէպ յազատութիւն առաջին և կարեւոր քայլն է՝ տղգին մէջ բարոյական և ֆիզիքական ոյժ գոյացնել, Հայաստանի ապագային նկատմամբ զօրաւոր հաւատք և յոյս ներշնչել: Հայ ազգի ազատութեան յոյսը իւր մէջը փնտռենք: Յեղափոխութիւնը Հայաստանի ժողովուրդը պիտի կատարէ, արտաւաճմանի Հայերն պիտի օգնեն և եւրոպական տէրութիւնք պիտի համակրին:

Տարակոյս չկայ թէ մեծ տէրութեանց համակրանքն մեր կողմ ունենալ պարտինք: Ռուսիա և Անգլիա, մանաւանդ Ռուսիա, մեզ համակրելով կրնայ քաջալերել և մեր յաջողութիւնը ապահովել: Բայց նախ համակրելի ըլլալու ենք: շատեր կը կարծեն որ մեր թշուառութիւնը առ մեզ կը գրաւէ համայն քաղաքակրթեալ աշխարհի համակրանքը: մեր թըշուառութիւնը զմեզ իբր խեղճ կը ներկայացունէ եւրպիոյ, և շատեր չեն կարող իսկ զգածուիլ այդ սոսկալի հարստահարութեանց տեսարանէն շատ հեռու գըտ-

նուեցով: Երբ Եւրոպա տեսնէ թէ դարուց գերութիւնը մեր վեհ հոգին չէ ընկճած, թէ իբր քաջ զինուոր պատերազմիլ մոռցած չեմք, թէ կրնանք միանալ, կազմակերպել, կառավարել, պիտի տեսնէ զմեզ բարձր սկզբամբ տողորեալ, յարգանք պիտի կոչէ զմեզ դժբաղդ պարագայից տակ վեհ հոգիներ, եթէ յաղթունինք իսկ՝ պիտի յաղթենք: Պէտքի վեհաժողովին մասնակցողք, Հայերը ազատութեան արժանի վիճակի մը մէջ չտեսան, տաճկաց կառավարութենէն խոստում առին մեր պաշտպանութեան, քանզի զմեզ պաշտպանելու կարօտ խեղճ վիճակի մը մէջ տեսան: Եթէ վերջին տարեաց շարժումնք վերջին Թուրքո-Ռուս պատերազմէն առաջ լինէին, Հայաստանը թերեւ ազատ կը լինէր այսօր: Այդ պատեհութիւն մ'էր որ անցաւ: Այժմ մեզ կը մնայ ներքին զօրութիւն համբարել մեր ազգին մէջ և պատրաստ ըլլալ ներկայացող առաջին պատեհութենէ օգուտ քաղել:

Ազգային շարժման ներքին և արտաքին կեդրոն մ'ունենալ խնդրոյն կարեւորագոյն կետերէն է զոր «Հայք»ը իմաստութեամբ յուզած է և կը յուզէ տակաւին: Միութեան օգտակարութեան վրայ խստիւ պէտք չէ, քանզի ուրիշնայայտ ճշմարտութիւն է: Կը մնայ ուրիշ թէ ի՞նչպէս կրնանք կեդրոնի մը միանալ: Արտասահմանի հայոց քուէով կեդրոն մը կազմել եթէ կարելի ըլլայ, մինչդեռ հիմա գոյութիւն ունեցող ընկերութիւնք կան և միան, եղած ջանքերը միայլ ընկերութեան գոյութեան ծնունդ կուտան և կօզնեն ինքիքը աւելի կ'ճռելու: Քանզի ամեն ընկերութիւն իրեն յարողներ պիտի ունենայ և վէճեր և ամբաստանութիւններ չպիտի վերնան ի միջոյ:

Յայտ յանդիման է որ ընդհանուր ընտրութիւն կատարելու մէջ վտանգը բաղդատարար մեծ է: Քաղաքի մը մէջ ամեն հայ, մինչ իոկ ազգային դատին անտարբեր եղողներ և մատնիչ լըրտեսք, պիտի ճանչնան զմեզ և մեր խորհուրդները: Եւ քանի որ մեր գործունէութեան առպարէզ պիտի ըլլայ տաճկահայաստան, պարտինք իբր հլու հպատակներ երեւիլ տաճկին և իբր ճշմարիտ յեղափոխական գործել: Մենէ որչափ որ քիչ

մարդիկ ճանչցուն հասարակութեան, այնչափ ընդարձակ կ'ըլլայ մեր գործունէութեան առպարեզը: Քուէարկութեան համար տուրք վճարելէ աւելի խիստ սահման մը դնել պարտինք:

Քուէարկութիւնը ընդհանուր ընելու մէջ ուրիշ անտեղութիւնք կան, որոց մին է ժողովրդեան ընդհանուր քուէարկութեան անպատրաստ լինելը: Շատ հաւանական է որ ընդհանուր քուէարկութեամբ շատ մը խակ և խնդրէն անտեղեակ մարդիկ պիտի խռնուին ընդհանուր ժողովին և համաձայնութեան մը յանգեւը անկարելի պիտի դառնայ:

Բաղդատարար դիւրին և օգտակար է ներկայ ընկերութեանց կողմէ ընտրուած նուիրակաց ի մի համախմբել և կեդրոն մը հաստատելը: Նոցա Միաբանութիւնը բաւ է ժողովրդեան վստահութեան: Ընդհանուր ժողովը կազմելու համար 15 կամ 20 նուիրակք բաւական են, և ամեն մեծ ընկերութեան թոյլ տրուելու է մինչև կէսէն 2 պակաս նուիրակներ ղրկելու և այլք իրենց մեծութեան համեմատ: Մեծամասնութեան որոշումը յարգել սովորելու ենք քանզի մեծամասնութիւնը քիչ կը սխալի և աւելի շուտ կը տեսնէ իւր սխալը: Ամեն անհատի նոյն համոզում ունենալը անկարելի է բայց տարբեր համոզումներ զիրար կը չափաւորեն: Եւրոպական խորհրդարանք տարբեր տարբեր կուսակցութիւններէ կը բաղկանան և դարձեալ Միութիւն են, և մեծամասնութեան որոշումը ի գործ կը դնեն, ամեն հայ իրեն համար անձնական յատուկ համոզումներ կրնայ ունենալ կեդրոնի մը հետ միանալով հանդերձ:

Եթէ այս ձեռնարկը երկու ընկերութեանց միանալու պատճառ ըլլայ, անկարող ամենը մի անուան տակ մկրտելու, նպատակին կէսէն աւելին իրագործուած կ'ըլլայ:

Արտասահմանի հայրենասիրաց ջերմ աշխատանք կարելի է յաջողութիւն: Ընդհանրապէս Հայկական դատին ջերմ պաշտպանողք ունին յարաբերութիւն ընկերութեանց միոյն հետ: և նոքա որ հայրենեաց փաստը կը ջատագովեն, առաջին պատեհութեամբ թող միանան գաղտնի ընկերութեանց միոյն հետ, որպէս զի կարող ըլլան օգնել ընդհանուր միութեան և քուէարկելու իրաւունք ստանալ: Ար-

տաքուստ խօսելը շատ քիչ արդիւնք կուտայ, ի ներքուստ կրնանք համոզել, յուզել և արագութեամբ յառաջ ի նպատակ անդր մղել մեր խնդիրը:

Ո՛վ լուսամիտ հայութիւն, զգալի եղիր ամեն ընկերութեան մէջ, շահամուք և մոլեռանդք պիտի տեսնեն իւրեանց զօրութիւն ջլատեալ և միութիւն ու սէր պիտի յաղթանակեն: Ամեն ընկերութեանց անդամք խօսին զայս խնդիր, գրեն իւրեանց թերթերու մէջ, ընկերութիւն ընկերութեան հետ գաղափարներ փոխանակէ, և չգաղբի խօսելէ գրելէ և գործելէ, մինչև որ ազգային նուիրակը ղրկեալ ընկերութեանց կողմանէ ժողովին խորհին և գործեն մեր սուրբ դատին համար: Առաջին ժողովոյն համար Լոնտոն յարմարագոյն վայր ըլլալ կը թուի:

Կեդրոնի հաստատմամբ անդամոց թիւը զգալի կերպով պիտի աւելնայ, հայութեան վստահութիւն և հաւատք հաստատ հիմն պիտի գտնէ: Կեդրոնական սնտուկ մի պիտի հաստատուի անդամակցութեան տուրքը գանձելով և նուէրներ նշուներով պիտի զօրանայ. տաճկաստանի մէջ ստակի անվիճելի զօրութեան վերայ գաղափար ունեցողք գիտեն թէ ինչ մեծ գործ կրնայ կատարել: Տաճիկ պաշտօնեայք ամենափոքր գէնքերն կը խլեն Հայոց ձեռքէն, մեծ քանակութեամբ գէնք պարտի ղրկուիլ Հայոց, կանսնաւոր զինեալ բանակի, թշնամի խուժանի վայրագ Բրդաց, աւազակ Ձէրքէզներու և մատնիչ Հայերու դէմ մարտնչելու համար: Հայոց Ազատութիւնը երազելէ առաջ միանանք: Եղբայր ենք մենք, Հայաստանի համար կը տրուի մեր սիրտը, մի է մեր նպատակ, ինչո՞ւ իրարմէ զատ գործենք: Մոռնանք մեր անձը, սպաննենք մեր դէպ իրեար ունեցած ատելութիւնները և շահախնդրութիւնն. մեր անձը մեր խնդրոյն հետ բաղդատելով շատ փոքր է. այն որ իւր անձը այս մեծ և վեհ խնդրոյն մէջ չկրնար կորոնցնել, խնդրոյն էութիւնը դեռ չէ հասկցած: Եւ երբ ժողովուրդը խնդրոյն տակ անձ կամ անհատականութիւն կը տեսնէ, կ'արհամարհէ, կը խորհի, կը դատապարտէ: Մեր դէպի Հայաստան ունեցած սիրոյ կապերը զմեզ մէկ ընեն, որպէս զի մեր միացեալ սէրը փշրէ անոր շղթայքը:

Օգ. 19, Շիբակոյ Հարազատ Եղբայրը
ՀԱՅ ՈՄՆ

ՆԵՄՆԿ ԽԵՐԵՆՐԴԷ

...Խմբագիր

Օսմանցուց իշխանութիւնն երբէք կանոնաւոր և քաղաքակիրթ իշխանութեանց հաւասարած չէր, բայց այս վերջին տարիներս բոլորովին անկանոն եղած է եւ ժողովուրդն անիշխանութեան երեսէն կը նեղուի: Կարծես թէ օրէնքի և արդարութեան գաղափարն բոլորովին անհետանալու կը միտի: Ո՛վ ինչ կրնայ անել՝ կ'անէ, ո՛վ ինչ կրնայ յափշտակել կը յափշտակէ: Անամօթ և անինչ սինլքոր դասերն հետ գհետէ աւելի համարձակութիւն կ'առնուն վասնզի ամեն մարդ կը տեսնէ՝ յստակ թէ կառավարութիւնն ինքնին բոլորովին հաշուէ դուրս ձգած է օրէնքն ու արդարութիւն: Մարդ մը կրնայ ամեն անօրինութիւն գործել եթէ անով պաշտօնէից քսակին փոքր ի շատէ օգուտս կրնայ բերել: Իրաց այս ընթացքին վախճանն շատ ահաւոր և սոսկալի պիտի ըլլայ:

Կը յիշէք թէ կառավարութեան պալատն անցեալ տարի այրեցաւ: Այս տարի զայն վերանորոգելու ձեռնարկած են: Ատաղծի մասին պէտքերն հայթայթելու ալ տարօրինակ դիւրութիւն մը հնարած են: Պարտէզներէն ծառ կը կտրեն կը տանին առանց սէրովն հաւանութեանն կամ գիտութեանն իսկ: Պարտէզի տէր մը անցեալ օր վրայ կը հասնի ճիշդ այն պահուն յորում իւր մէկ ծառն կը կտրէին. կ'առաջարկէ որ երկու մէծիտ տայ ծառն փրկելու համար որպէս զի չկտրեն: Կը պատասխանեն թէ ծառ պէտք է կառավարութեան ոչ թէ մէծիտից:

Ծառերու անապահով այս վիճակն դիտելով՝ տեսարք ոմանք խոհեմութիւն կը համարին իրենք կանխել կտրել զայնս նոխ քան զպատահական այցելութիւնն պաշտօնէից:

Խարբերդու դաշտին մէջ ալ ուրեք ուրեք անապահովութիւնն շատ աւելցած է: Գողութեան դէպքերը օր քան զօր կը յաճախեն: Շէնթիլ գիւղի մէջ ամեն գիշեր այդպիսի դէպք անպակաս է. կը պատահի որ մէկ գիշերուան մէջ երկու տուն գող մտնէ: Հանգիստ քուն քնանալ չկայ: Յունիս 10ին գիշերն Տէր-Մամբրէ քահանային տունն բանալու են գնացեր, բայց

արթնցող դրացեաց աղմուկէն հալածուելով փախեր են։ Սակայն նոյն գիշերն Տէր Մամբրէի քրոջ տունն կը մտնեն գողեր, և երբ կինն կը ճչէ, բերանն կը բռնեն, և զինքն բռնաբարել կ'շխատին։ Վարդան անուն ութ տարեկան տղեկն կը մեռնի ահէն։ Գիւղին եկեղեցին փլած է, վարժարանն ալ չկայ կրնամ ըսել։ Իշխաններն անհոգութեամբ կամ անգործութեամբ կը մնան անտարբեր։ Ոմանք ալ ստիպուած կ'երթան ուրիշ գիւղ բնակիլ։ Շինթիլ Խուլուէն քառորդ ժամ հեռի է, և մնացած է աւազակաց ձեռքն։

3 Յուլիս 1893

* * *

ԲԱԼՈՒԷՆ ԵՂԵՂԵԿ ՄԻ

Բալու 1893 Յուլ. 13 Թրք

Մէծ. Տէր,

Քանկարի գիւղը որ Բալուէն 6 ժամ հեռու է ասկից երեք ամիս առաջ աւազակները սոյն գիւղէն Խալահճոնց Մարքար անուն անձը դաշտ գացած ժամանակ առեւանգեց տարեր էին, և երեք շաբաթ լեռը պահելէ վերջ 6 ոսկի փրկանք առած և ապա արձակած էին։ Այդ դէպքէն վերջ արդէն աղէկ դրութիւն մը չունէին։

Յուլիս 5 (Թրքական), երեկոյեան արեւը մարելէն վերջը, յանկարծ կ'երևնան աւազակք (Տալի Մուամէտի տղաքը) որք կուգան գիւղը ստակ ուզելու կամ կողոպտելու. գիւղացիք կը դիմադրեն, բայց անկարող ըլլալով աւազակաց հետ հունեյլել առանց զէնքի, դիմադրողաց մէկ մասը ետ կը քաշուի և աւազակները կը յաջողին գիւղապետ Տէրոնց Խայիկն բռնել տանիլ աւարի տեղ, հազիւ թէ քրդերն գիւղին կալերը կը հասնին, երբ լուրը կը տարածուի ամբողջ գիւղացւոց, և Մանոյեց Սարգոյանուն քաջ մարդն քանի մը երիտասարդներով կը հասնի հաւարին, և բաւական երկար կռուի կը բռնուին, վերջապէս աւազակք կը թողուն Խայոն և կռիւը կը շարունակեն։ Կռիւին պահուն աւազակաց զնդակէն կ'իյնայ Սարգոն, և աւազակք իսկոյն խոյս կուտան։

Գիւղացիք կառավարութեան լուր կուտան բայց կառավարութիւնը անտարբեր կը մնայ աւազակաց հետքը բնտնելու։

2 զինուոր կուղարկէ գիւղը պաշտպանելու, բայց սոքա աւելի աւազակաց կ'օգնեն քան թէ գիւղացոց։ Օր չկայ որ դէպք մի չպատահի քրդաց կամ Թրքաց երեսէն։

Մեռաւ Սարգոն, աւաղ, և և մեռաւ իւր հետ ամբողջ գիւղը։ Մինչև հիմայ քրդերը այդ անձէն կը վախնային, բայց հիմայ ալ ահ չունին։ Ցանքերը հասած են, բայց ո՛վ կը համարձակի դաշտ երթալ։ Գիւղացիք կ'ուզեն ուրիշ տեղ գաղթիլ բայց պէկերը և թէ կառավարութիւնը կարգիլեն։ Սովը, Գրդաց հարստահարութիւնք, կառավարութեան նեղութիւնը արագօրէն կ'աւերեն զգիւղն։

ՍԳԱՒՈՐ

ՆԵՄՐԵԿ ԵԳԻՊՏՈՍԷ

Գահիրէ, 1 Օգոստոս. 1893

Այսօր, միջօրէն կէս ժամ վերջն, Վեհ. Հայրիկի հրաւիրակ սրբազանք և երկոքին արեղայք ինչպէս նաև երկու լըրագրական թղթակիցք քաղաքս ժամանեցին։ Տէր Իւթիւճեան առաջնորդն ևս ընկերակցած էր իրենց։ Նոցին Սրբազնութիւնք՝ կայարանին մէջ փոքր ինչ հանգստանալէ զկնի, առաջնորդութեամբ հիւրամեծար Տեարց Մ. Անանեանց, Բ. Նահապետեանց և Բիէռ Փոլատի, և Ազգ. Ժողովոյ Փոխատենապետ Վսեմ Տէր Մարկոսով Պէյի, բազմալ ի կառու փառաւոր, ուղղակի առաջնորդարան իջան, ուր Հայր Իւթիւճեան բարի դալուստ մաղթեց նոցա յանուն Գահիրեցւոց, և երգեցիկ մանկունք ևս «Հիմի էլ Լոնքոն» երգեցին՝ լաւ տպաւորութիւն գործելով հրաւիրակաց վերայ։ Առաջնորդարանին մէջ իբր մէկ ժամ պատուասիրուելէ վերջ, Օթէլ Շէֆէօրտ ըստած հիւրանոցն մեկնեցան ուր գիշերն ացունելով՝ վաղն պիտի մեկնին յԱղեքսանդրիա։

Տեղւոյս և Աղեքսանդրիոյ ազգային պաշտօնական մարմնոց ինչպէս նաև երեւելեաց ոմանց կողմանէ Վեհ. Հայրիկի համար ընդունելութեան մեծ պատրաստութիւններ կը կատարուին։ Կ'ըսուի թէ Աղեքսանդրացիք վեց-եօթն հազար Փրանքի մօտ գումար մի հանգանակեր են, ո-

րոյ մէկ մասն ընդունելութեան ծախուց պիտի գործածուի և աւելցածն ալ նուէր պիտի տրուի Հայրապետին :

Ընթերցասիրաց ընկերութեան Գործ-
ժողովն աւորոյած էր յանուն ընկերու-
թեան պատգամաւորոթիւն մի յղել յԱ-
ղեքսանդրիա, ուղերձիւ մի բարի գալուստ
մաղթել Հայրիկին, բայց ուղերձին պատ-
րաստութեան մէջ անհամաձայնութիւն մի
ծագելով՝ վերջապէս որոշուած է որ մի-
այն հեռագրով շնորհաւորեն զգալուստ
Հայրապետին երբ յԱղեքսանդրիա ժա-
մանէ :

Այս տեղի երեւելաց մէջ տեսնուած
ոգևորութիւնն, որ վաղանցիկ պիտի լինի
բնականօրէն, կրնար անիրազեկ այցելուի
մի խաբուսիկ միտթարութիւն ներշնչել
եզրպատհայոց ազգային զգացմանց սովո-
րական վիճակին նկատմամբ : Աւա՛ղ որ
որ այս առ ժամն եռանդնեալ մեծատունք
մեր յոյժ անտարբեր են ուրիշ ժամանակ-
ներ թէ ի՛նչ կը դառնայ Հայ անուան ու
Հայ աշխարհի շուրջն և մինչև անգամ չեն
հետաքրքրուիր տեղական ազգային և կըր-
թական գործերու համար... :

* * *

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Վիէննայի Արժ. Հարց ՀԱՆԴԻՄՆ իւր
Օգոստոսի թուով կարևոր առաջարկու-
թիւն մի կ'անէ ազգին, այն է Հայ Լրա-
գրութեան հարիւրամեայ տարեդարձն տօ-
նել 1894 Հոկտ. 28ին, ըստ որում առաջին
Հայ Լրագրի առաջին թիւն հրատարա-
կուած է 1794 Հոկտ. 28ին, խմբագրու-
թեամբ ՏէրՇմաւունեան քահանայի ի
Մատրաս :

Այսպիսի կարևոր թուականի Հարիւ-
րամեայ տարեդարձն տօնելու կարևորու-
թիւնն ցուցնելէ յետոյ ՀԱՆԴԻՄՆ հետեւե-
ալ 3 առաջարկութիւններն կը ներկայա-
ցունէ .—

«1. Հայ խմբագիրներու համաժողով
(congres) մը կազմուի, յարմարագոյն տեղ
մը, ուր խմբագիրք խորհին եւ գործնա-
կան միջոցներ ցոյց տան ազգային թերթե-
րն իրենց արժանաւոր բարձրութեանն հա-
նելու և հասարակութեան զգալապէս օգ-

տակար ընելու : Այս օրս համաժողովներն
ամեն ձեռնարկութեան յառաջադիմու-
թեանն անհրաժեշտ պայմանը կը նկա-
տուին, և կը տեսնենք որ Եւրոպա անընդ-
հատ համաժողովներ կը կազմէ գիտու-
թեան, արուեստից, ընկերութեանց ամէն
ճիւղերու, և ասկէ մեծապէս օգուտներ
յառաջ կու գան :

2. Ի սկզբանէ ցայսօր հրատարակուած
լրագիրներու ցուցահանդէս (exposition)
մը դրուի թէ՛ ազգային կեդրոն մը և թէ՛
Եւրոպական քաղաք մը : Այս ցուցահան-
դէսն ազգին այլևայլ կողմանէ օգտակար
ընելու միջոցներ ձեռք առնուին :

3. Միջոցներ առաջարկուին կեդրոնա-
կան անձեռնմխելի դրամագլուխ մը կազ-
մելու, որուն տոկոսիքէն ժամանակին հա-
յերէն Լրագիրներու տարեկան օրինակնե-
րու բաժանորդագրուի՝ օրինակներն աղ-
քատ դպրոցներու, ուսուցիչներու, մա-
տենադարաններու, ընթերցարաններու
բաշխելու համար : Ասով իւրաքանչիւր
խմբագրութիւն քէթ սրոշեալ քանակու-
թիւն մը մշանջնաւոր բաժանորդաց
կ'ունենայ :»

Հանդիսի առաջարկք, մանաւանդ ա-
ռաջին երկուքն, յոյժ գովելի են և գոր-
ծադրելի : Չենք կարծեր թէ Հայ խմբա-
գիրք առ հասարակ փափաք չզգան հա-
մաժողով մ'ունենալու այս առթիւ : Դժ-
ժուարութեանց առաջինն է որոշել քաղա-
քն ուր համաժողովն պէտք է տեղի ունե-
նայ : Եթէ Մատրաս յոյժ հեռի չլինէր,
յարմարագոյն վայրն պիտի նկատուէր իբ-
րե օրորոցն Հայ Հանրային մամլոյն : Ի Կ.
Պոլիս է Հայերու ստուարագոյն գաղթա-
կանութիւնն և, եթէ չեմք սխալիր, Հայ
խմբագրական կեանքի և գրական գործունէու-
թեան մեծագոյն կեդրոն, բայց և օսման-
եան մայրաքաղաքն ականբեր անյարմարու-
թիւններ կ'ընծայէ համաժողովոյն : Տփ-
ղիս անյարմար չէ, և սակայն Վիէննա կը
թուի լինել յարմարագոյն ևս : Անդ Մխի-
թարեան Հարց Վանուց մէջ արդէն Հայ
Լրագրաց գրեթէ կատարեալ հաւաքածոյն
կը գտնուի, և կրնայ ցուցահանդէսն ալ
Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ կազմուիլ :

Կարծեմք ի դէպ է որ ՀԱՆԴԻՄՆ խմ-
բագրութիւնն առանց վարանելու յանձն
առնու զհարիւրամեակն կազմակերպելու
նախաձեռնութիւնն և մասնաւոր հրաւէր
ուղղէ Հայ Խմբագրաց որ նԱն նիւթեր

նշանակեն հարիւրամեակի մէջ քննուելու արժանի. ԵՐԿՐՈՐԴ, կարեւորագոյն նիւթեր բաշխուին ձեռնհաս խմբագրաց յուսումնասիրութիւն որպէս զի հարիւրամեակին գան պատրաստուած ճառերով:

Թեւադրենք հոս ուսումնասիրութեան արժանի մի քանի նիւթեր. —

1. Պատմութիւն հայ լրագրութեան.
2. Հանգամանք և շրջափոխութիւն (evolution) տաճկահայ լրագրութեան:
3. Հանգամանք և շրջափոխութիւն ռուսահայ լրագրութեան:
4. Հանգամանք է շրջափոխութեան արտասահմանի հայ լրագրութեան:
5. Քննադատութիւն ներկայ զանազան հայ լրագրաց:
6. Խմբագրական կոչման բարձրութիւնն և խմբագրի ազնիւ սկզբունք:
7. Թէ հնար չէ՞ որ ռուսահայ լրագրութիւնն աւելի մերձենայ թրքահայ գրական լեզուին որպէս զի աւելի ասպարէզ գտնէ Տաճկա-Հայոց մէջ և միանգամայն ընդհանուր գրական լեզուի տէր դառնայ ազգն: Առ այս թրքա-հայ լրագրութիւնն ինչ մերձեցում կարող է անել ռուսահայոց:
8. Թէ ժամանակ է մասնագիտական թերթերու հրատարակութեան և ի՞նչ մասնագիտութեանց:
9. Թէ որպէս կարելի է հայ լրագրութիւնն աւելի ծանօթ գործել օտար ազգաց:

ՄՆԱԼ ՅՕՏԱՐՈՒԹԵՄՆ.

Թէ ՎԵՐԱԴԱՆԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ՝

Մեծայարգ Խմբագիր Հայք լրագրոյն, Ձեր բազմօգուտ Հանդիսին 15 որդ թուոյն պարունակութեանց մէջ բովանդակեալ 2 յօդուածք կարդալով, յորոց մին՝ «Ամերիկայի Հայոց երկու խօսք» վերնագրով և միւսն անմիջապէս հետեւորդ սորին, «Տեղեկագիր սոսկալի հարստահարութեանց», և բաղդատելով մին միւսին հետ սա եզրակացութեանը կարողացայ յանգիլ թէ, պարզապէս յորդոր կը կարգացուի յԱմերիկայ ապաստանել բարեբաղդ եղող հազարաւոր տառապեալ Հայոց որք երբէք յաջողած են գոնէ 60 լիւրայ հաւաքել իւրաքանչիւր ոք ի շնորհս

Միացեալ Նահանգաց սահմանադրութեան, առանց այլ ևս յապաղելու փութան վերադառնալ իւրեանց գաւառը իւրեանց գերութեան երկիրը և նետուն անկարող և անպաշտպան թրքական պիղծ իշխանանավարութեան ճիրանանցը մէջ յուխագնացութիւն իսլամական «սիւննէթը շերիֆին», մինչև իսկ առանց մտածելոյ գեթ մի Ամերիկեան քաղաքացւոյ իրաւանցը տիրանալ:

Սոյն խրատ կը տրուի վերադարձող Հայ երիտասարդին որ եթէ չ'է ամուսնացած, իւր առաջին պարտաւորութիւնն լինի մի օրիորդի հետ ամուսնանալ, իւր բազմամեայ աշխատութեան և խնայողութեան արդիւնքը յատկացնել 4—8 ընտիր և քաջառողջ զաւակունք յարուցանելու, որպէս զի պատեհութիւն ծագի 4—8 մէծիտ գլխահարկի վճարմանը թրքական գանձոյն՝ սկսեալ իւրեանց ծննդեան օրէն:

Երբ որդիքն ժամանեն յարբունս հայերուն գերութիւնը մշտենջնաւորեն և ի պահանջել հարկին պատրաստ մարդազոհք գտնուին ի թափօրն իսլամական մոլեռանդութեան:

Ահա սոյն գոյներու վն նկարեալ գտայ

այդ կրկին յօդուածոց իմաստը միաբանանելով մին ընդ միւսն. և չունենալով առայժմ յաւելուլ աւելի ինչ տեսութիւն այդ զարմանալի քաղաքականութեան վերայ, բաղցացող եմ միայն լսել ձեզմէ, միթէ ուղիղ օեմ եզրակացութեանս մէջ թէ սխալ:

Հաճեցէք ընդունիլ

Մեծայարգ Խմբագիր,

Օգ. 20. 1893 ողջոյնքն բարեկամիդ
Թենէֆլի, Ն. Եորք Մ: Վ. Պէճլիկձի

ՊՏԱՍՍԻԱՆ

ՎԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ

Մեր յարգելի թղթակից այնքան պիտի չզարմանար որ պանդուխտ Հայերն կը յորդորեմք վերադառնալ հայրենիք եթէ իւր նամակի գլխաւոր իմաստներն աւելի դրական ձևի տակ բացատրելու փորձած լինէր:

Մեծ նեղութիւն կայ ի Թուրքիա, ամեն կողմ Հայերն կը հարստահարուին աւելի անեղօրէն քան երբէք. ուրեմն կըրնա՞մք ասել Ամերիկայի Հայոց— եղբայրներ, ձեր հայրենի քաղաքաց մէջ, ձեր

մայրենի յարկաց տակ մեծ վտանգներ կան, մնացէք այս երկրի մէջ ուր ապահով էք. սպասեցէք մինչև որ փոթորիկն հանդարտի:— Ո՞ր գիտէ փոթորիկն ե՞րբ պիտի հանդարտի:

Եւ միթէ վերադարձող ամեն Հայուն ստոյգ վտանգ կը սպասէ: Եւ միթէ կը վայելէ՞ որ մեր քաջ ու կտորիճ երիտասարդներ օտարութեան մէջ իրենց ապահովութիւն հոգան և թողուն որ իրենց ծնողք, իրեց եղբայրներ ու քոյրեր Հայրենեաց մէջ անոք մնան:

Գիւղեր կան սւր ալ երիտասարդ չիք, ամենն ալ հեռացած են: Աղջիկներ խումբ խումբ կեցած են, ամուսնութեան հասուն հասակի հասած. և չկան երիտասարդներ զայնս ի կնութիւն առնող: Թող երիտասարդք հոս մնան, օրիորդք հոն անամուսին, սպասեն որ աշխարհն հանդարտի, և արդիւնքն այն պիտի լինի որ Հայ ցեղն ողբալի կերպով նուաղած գտնուի ժամանակ յետոյ:

Հայաբնակ գաւառաց եւ Հայաստանի Հայուն ապագային սպառնացող մեծագոյն վտանգն աւելի պանդխտութիւնն է քան թէ թշնամին: Մեք գիտնալով թէ պանդխտութիւնն երկրին ներկայ պայմանաց մէջ անխուսափելի է մէկ մասին համար, յախուռն դէմ չեմք խօսիր, բայց և այնպէս կը փափաքեմք որ պանդխտութիւնն ալ խոհապէս չափ ու սահման ունենայ, որպէս զի Հայրենեաց ցաւերն ամոքելու ծառայէ ոչ թէ Հայրենիքն սպառելու, պարպելու: Անոր համար խորհուրդ կու տամք որ փոքր ի շատէ դրամ չահած երիտասարդք վերադառնան և իրենց ծնողաց աչքին լոյս և եղբարց բազուկներուն ցօրավիզ լինին:

Երբ հօր տուն հրդեհ լինի, եւ հոն իւրքն այրելու վտանգին մէջ լինին, միթէ դուրս գտնուող կտորիճ որդին վտանգ յանձն առնելով չի՞ վագեր փրկելու իւր սիրելիները:

Մեք այն յոյսն ունիմք թէ Ամերիկայի Հայերն ոչ միայն իրենց ծնողաց աչքին լոյս պիտի լինին այլ և, ուրիշ մտքով մի, իրենց եղբարց: Ամերիկայի մէջ երեք կամ չորս տարի ապրած մտաբաց Հայ երիտասարդ մի շատ աւելի հասկացող մարդ է քան Թուրքիոյ մէջ մնացած իւր ընկերները: Ամերիկայէն դարձող Հայն կը յուսամք թէ իւր բաղդատական նրբամտու-

թեամբն պիտի այնպէս վարուի որ պարապ տեղ նեղութիւն և հարստահարութիւն չկրեն. նաև ներքին միաբանութեան և սիրոյ ու համերախութեան ոգին պիտի արծարծէ Հայոց մէջ: Մեր Հայրենեաց մէջ բուն մերայնոց ռամկութիւնն, շատերուն ուռուցիկ եսասիրութիւնն, ոմանց կրօնական մոլեռանդութիւնն ու խտրութիւններն շատ չարեաց և ներքին տկարութեան պատճառ են. և յուսալի է թէ լուսաւորեալ երկրէ գարձողներն օրինակաւ և խօսքով դարման տանին այդ աղետաբեր տկարութեանց:

ԼՄՆԵՐԻԿԸՅԻ ՀԱՅՆԵՐՆ

ԻՆՉՊԷՍ ԱՌԵԻՏՈՒՐ Կ'ԱՆԵՆ

Ուստրի մէջ Հանդիպեցանք մի քանի ամերիկացի խանութպաններու որք բաւական խստութեամբ կը քննադատէին Հայոց առևտուր անելու կերպն: Դոքա կ'ասեն թէ Հայ յաճախորդներ չեն ուզեր վճարել ապրանց սովորական և հաստատուն գինն, այլ կը ջանան գին կտրել, գինն կտրել, և շատ կը վարանին ու կը մտախառն այնպէս որ կը ձանձրանանք:

Մեք յիշեցուցինք այդպիսեաց թէ արեւելքի մէջ սովորութիւն է գին կտրել, պէտք չէ Հայերն շատ մեղադրել այդ բանին համար: Սակայն այժմ ալ մեր Հայ եղբայրներու կը բաղձամք յիշեցունել թէ հոս Ամերիկա է և ոչ Թուրքիա. և պէտք է առևտրոյ այն արեւելեան ձանձրալի կերպերէն զգուշանալ:

Եթէ քիչ մի մտածեմք պիտի տեսնեմք թէ գին կտրելն ստորին եւ անքաղաքակիրթ սովորութիւն է: Գին կտրել ուզողն ի հարկէ այնպէս ենթադրած կը լինի թէ վաճառողն չափազանց գին կ'ուզէ, չափազանց չափ անել կ'ուզէ, այսինքն խաբել կ'ուզէ զյաճախորդն: Թուրքիոյ մէջ այնքան հնացած սովորութիւն է այդ որ մարդիկ այլ ևս չեն զգար և չեն մտածեր զայս: Հոն ամեն մարդ այնպէս կը վարուի առևտուրի մէջ իբր թէ դիմացինն գինքն խաբել կ'ուզէ եւ պէտք է ջանալ չխաբուիլ: Ի՞նչ անպատիւ և գեթ ուժ ենթադրութիւնն որ դժբաղդապէս անհիմն չէ:

Բայց այս երկրին մէջ բանն այնպէս չէ : Ընհանրապէս գնեւին որոշ են և վաճառողըն ամեն յաճախորդէ մի եւ նոյն գինն կ'ուզէ, և ա'յն գինն կ'ուզէ որով ապրանքըն վաճառել և հարկերին այսչափ չահիլ կրնայ :

Ամերիկացիք աժան բաներ գնելու ատեն նախ ապրանքն կ'ընտրեն, եւ սպաքսակ ի ձեռն կը հարցնեն թէ ո՞րչափ պարտին. — 25 սէնթ, 75 սէնթ, եւն. — կը վճարեն անձայն և կ'անցնին կ'երթան :

Իսկ երբ բաւական սուղ բան մ'է, ապրանքն տեսնելէ յետոյ գինն կը հարցնեն, և եթէ չափազանց սուղ երևի իրենց, բնաւ չեն առաջարկեր որ, օրինակի համար, 12 տողար պահանջուած ապրանքին 11 տողար վճարեն, այլ պարզապէս կ'ասեն թէ այն գնով ապրանք գնելու միտք չունէին, կամ թէ պարզապէս կ'անցնին կ'երթան ուրիշ տեղէ գնելու :

Կօշկի վաճառական մի անցեալ օր կը պատմէր մեզ Ուստըրի մէջ թէ Հայ մի կօշիկն նայեր, գինն հարցեր է, — կարծեմ մէկ տողար 50 սէնթ — զոր չափազանց սուղ կամ անհեթեթ գին համարելով այնպիսի չարժամաք և ամբողջ մարմնոյ ծամածռմամբ յայտներ է միտքն որ խանութպանն կարծեր է թէ Հայն ինքզինք գետին պիտի գարնէր սոսկումէն :

Մեր հայրենակցաց համար պատուաւոր եւ արժանաւոր կերպն է ապրանքին լաւ նայիլ, ճանչել, և եթէ ապրանքն արդարեւ կ'արժէ այն գինն որ կը պահանջուի, վճարել անմիջապէս : Բայց եթէ արդարեւ չափազանց է գինն, երթալ ուրիշ տեղ, միայն թէ գին չկտրել, գինն վար իջեցունել չջանալ :

Աղէկ չէ ենթադրել թէ խանութպանըն խաբելու ետեւէ է. չխաբուելու համար ապրանքն ճանաչել պէտք է, ոչ թէ շատ խօսիլ : Եթէ կ'արժէ, վճարել առանց տնտնալու, առանց առարկելու : Աղնիւ և արդար յաճախորդն կ'ուզէ որ վաճառողըն իրմէ չահի :

Եթէ կ'ուզեմք որ Ամերիկացիք յարգեն զմեզ, պէտք է յարգելի լինիմք ոչ թէ ձանձրալի :

ԵՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

ԵՒ ՕՏԱՐ ԱՆՈՒՆՆԵՐ

... Խմբագիր ՀԱՅՔԻ,

Արդեօք անպատուութիւն չէ՞ մեր ազգին այսպէս անուններ փոխել : Այսօր Ամերիկայի Հայոց մեծամասնութիւնն օտար անուններ կը կրէ, թէ դործարանաց մէջ և թէ մինչև անգամ իրենց բարեկամաց մէջ, ամօթ կամ անպատուութիւն կը համարին հայու անուն կրել :

Չորս աստիճան կը գտնեմ այս փոփոխութեան մէջ : Ոմանք եան մասնիկն կը բառնան և կը լինին Միրաբեանը Միրաբ, Ծերոնեանը՝ Ծերոն, Մարտիրոսեանը՝ Մարտիրոս :

Ոմանք ԵԱՆ մասնկան տեղ son (սըն) կը դնեն և կը կոչեն իրենք զիրենք Մաթիւսըն եւն :

Ոմանք իրենց անուններուն անգլիերէն համազօրներն կը գործածեն. ՊԵՏՐՈՍ ինքզինք ֆիթֆըր կը կոչէ, ՅԱԿՈԲ կ'առնու ձէֆֆը անուն. և այն որ ԳԵՈՐԳ Է ձՕՐՁ կ'ասէ ինքն իրեն. ԳՐԻԳՈՐ կը լինի ԿՐԷԿՈՐԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍԸ՝ ձՕՆ, ՊՕՂՈՍԸ՝ ՓՕԼ :

Ոմանք ալ դժբաղդաբար անթարգմանելի ունենալով անուն, կը ստիպուին բոլորովին նոր անուամբ մկրտուիլ, և ահա բազմաթիւ Հէրրիներ, Չարլիներ, Ֆըրանքներ կ'ենեն երեւան :

Ես որ Ֆրանքլին (Մէս) կը գործէի 2 տարի առաջ, 18 հայ կար այնտեղ, մենէ ութին անուն Չարլի էր. մի քանիներուն՝ ֆիթըր, ձՕՐՁ, ձէք ևն, միայն երեք հոգի կար որ անունը փոխած չէր, անոնք ալ ճարպիկ չըլլալով չէին կրցած աղուոր անուններ գտնել : Ես ճարպիկներու յետին դասին վերաբերելով՝ հաւնած էի Չարլի անունն, որ ոչ իմ այլ հօրն կարապետ անունն էր, զոր թարգմաններ էի անգլիերէնի :

Ես Տաճիկ մի տեսայ ֆրովիտէնս որ Ամերիկացիի հետ ամուսնացած և զաւակաց տէր եղած է, իւր արու զաւակաց միոյն անունն դրած է Օսման, միւսոյն՝ Ալի :

Եւ մենք Հայերս դեռ կը պարծինք թէ նախանձաւոր ենք մեր Հայութեան ..

Ամերիկայի մէջ հայ ընտանիքներ ալ

տեղում եմ որք բարձր կարգի Հայիր լի-
նելու պարծանքն ունին, և սակայն իրենց
զաւակաց օտար անուն կուտան, իբր թէ
զայնս օտարանալու դատապարտել ուզէ-
ին անգոստին ի ծնէ:

Սիրելի Հայրենակիցներս, անունն չէ
որ գմարդ կը մեծցնէ, այլ մարդն է որ
զանուն կը պատուէ: Մեք այս երկրի մէջ
ջանանք ըլլալ խելացի և պատուաւոր
գործով, և վստահ լինինք թէ մեր ա-
նուններ ալ որքան Հայկական լինին՝ վը-
նաս չեն աներ մեզի, այլ կը հնչեն փա-
ռաւոր: Պ. Կ. Ա.

Փրովիտէնո, 17 Օգոստ. 93

ԹԵՆԿԵԳԻՆ ԵՐԼԵՍՏՆԵՐ ՀԱՅՈՑ ՀԵՄԵՐ

AZNIVE ENGRAVING Co.

353 Washington St. BOSTON MASS.

ԳԾԱԳՐՈՈՅԻՆ

Ամեն Հայ կրնայ սովորիլ գծագրու-
թիւն 30թ-էն 50թ-էն ինչի համար, գրչի
ծայրով, դիմելով վերոյիշեալ ատրեսին
անձամբ կամ նամակաւ, 15 դասէ բաղկա-
ցեալ, կերպերն ու գաղտնիքը պարզ կեր-
պով կը հասկցունին, գծուած և գծուելիք
պատկերներն կը խրկուին կատարեալ բա-
ցատրութեամբ: Գին 30 թալէն կանխիկ:
Շաբաթը 25թ-էն մինչև 50թ- կրնայ շա-
հուիլ:

ՓԱՅՏԻ ՎՐԱՅ ՓՈՐԱԳՐՈՒԹԻՆ

Ամեն Հայ կրնայ սովորիլ փայտի փո-
րագրութիւն դիմելով վերոյիշեալ գոր-
ծարան անձամբ կամ նամակաւ. 15 դասէ
բաղկացեալ, կերպերն ու գաղտնիքը պարզ
կերպով կը բացատրունին. պատկերն ու
փորուելիք պատկերն փայտի վրայ տպ-
ուած կը խրկուին կատարեալ բացատրու-
թեամբ: Գին 30թ. կանխիկ: Շաբաթը 25
թ-էն մինչև 50թ. կրնայ շահուիլ:

ՅՈՐԾՈՒՄ

Ամեն Հայ կրնայ սովորիլ լուսանկար-
չութեան արհեստն ամեն ճիւղերով. չոր
և թաց փլաքներու վրայ ու նաև ամեն
թուղթի վրայ տպելու կերպերն, դիմելով
վերոյիշեալ գործարան և կամ նամակաւ:
Գին 30թ. 15 դաս:

ՅՈՐԾ ինչի ԿՐԵՑՎԻՆԿ

Այս արհեստն կրնան ամեն Հայ սով-
որիլ որք զինքի վրայ ժանտաջրով կերցու-
նել. դիմելով վերոյիշեալ գործարան կամ
նամակով: Գին 30թ. կանխիկ, 15 դաս:
25էն մինչև 50թ. կրնայ շահուիլ շաբա-
թը այս գործէն:

ՊՂՆՁԻ ՎՐԱՅ ՏՊԵԼՈՒ ՆՈՐ ԿԵՐՊՆ

Այս թանկագին արհեստը կրնան Հայք
ձեռք բերել դիմելով վերոյիշեալ գործա-
րան կամ նամակով: Գին 30թ. կանխիկ:
15 դաս: 40թ. շաբաթը կրնայ շահուիլ:

HALF-TONE ՀԱՅ-ԹՈՆ

Այս արհեստն որ գաղտնիք մ'է և 50
թալէրէն մինչև 60թ. կը շահին լաւ ը-
նտղներն ամեն Հայ կրնայ սովորիլ 30թ.
կանխիկ վճարելով յիշեալ գործարանը. 15
դաս:

AZNIVETYPE

Այս ալ նոր գաղտնիք մ'է որ ամեն
Հայ կրնայ սովորիլ վճարելով 100թ. կան-
խիկ 15 դաս. յիշեալ գործարանին մէջ:

Ամենքը մէկէն սովորիլ ուղղորդուն
մեծ գեղջ կըլլայ. աւելի տեղեկութիւն
ուղղորդներն պէտք է դիմեն կամ գրեն
մեզի:

ՄԻԱՄԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԵԼԵԻՄՏԻՑ

Ս. ՓՐԿՁԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՈՒՍՏԸՐԻ

Սկսեալ 1892 Օգոստոսէ ց1893 Օգոստոս

ՄՈՒՏԲ

\$183,33	Եկեղեցւոյ գանձանակէն
68,66	Հօլի
14,78	Մասնաւորաց նուէրներէ
1,48	Նախորդ տարիէն յաւելեալ
227,22	Ի նպաստ հատուցման վարդապե- տի տարեկանի անցեալ տարւոյ հանգանակութենէն:
74,75	Ի նպաստ Մ. Չերազի
214,12	" Հալէպի բանտարկելոց
272,25	Ս. Զատիկի տօնին
83,25	Ի նպաստ նոր գալիք վարդապե- տի ճանապարհի ծախուց:
100,00	Կիւլպէնկեանէ նուէր
71,88	Ճանապարհորդաց, աղքատաց և ննջեցելոց սնտուկէն յաւելեալ:
1361,82	Գումարն մտից

ԵԼՔ

\$200,00	Պանքայի տարեկան տոկոս
4,50	Տոկոս Սեպտ. 10 է ց25 Յունվար:
53,43	Այլ և այլ ծախք եկեղեցւոյ
44,56	Կազմի ծախք
17,25	Հագարարձութն դիւանական ծախք
37,00	ածուխ և փայտ
4,00	Զուր
37,00	Ապահովագրութեան
19,71	Հանգանակիչներու ճամբու ծախք
429,95	Անցեալ տարի մնացած պարտք
	վարդապետի տարեկանով (վճարեալ
100,00	Մ. Չերազի զրկուած
149,46	Հսկայի բանտարկելոց զրկուած
24,64	Հանգանակութիւն Հանգանակողաց
1125,46	Գումարն ելից: (ճամբու ծախք:
	Առաւելութիւն \$236,36:

ՆԱՄԱԿ ՎԱՆԷ

Վանէն առ ՀնՁԱԿ ուղղեալ թղթակցութենէ մի կը տեղեկանամք հետեւեալ ահաւոր դէպքին որ տեղի ունեցած է Գուրուպալ գիւղի մէջ, Վանէն մէկ ու կէս ժամ հեռու: Չորս գիւղացի հանդերձ երեք դեռատի կոյսերով վարագայ լեռն կեննն բանջարեղէն ժողովելու համար, և ահա ութ քիւրդ հեծելազօրք՝ Համիտիյէ գնդերէն՝ կը պատահին անոնց և սրախողխող սպաննելէ յետոյ չորս արուններն՝ չարաչար կը պղծեն 3 աղջկունքն: Արիւն և արցունք անդ իրարու կը խառնուին և ժայռերն իսկ կը շառագունին յամօթոյ: Բռնաբարեալ աղջկունք երբ զարհուրանքէն կը սթափին, կը դիմեն գիւղ գուժական տանն: Գիւղացիք քստմնած ու ողբազին կը վազեն խմբով ի վարագ և ըսպաննուածներն սայլի վրայ դրած ճամբայ կիյնան ուղղակի վան երթալու: Հակառակ ոստիկաններու Կիւմարուութեան կը հասնին ի վան, և նախ անգլիական հիւպատոսարանի առջեւ կանգ կ'առնուն՝ դիակներն ցուցնելու: Յետոյ կ'երթան Ռուսիոյ հիւպատոսին, և վերջապէս Կարապետ Նալպանտեանի տունն, ուր այդ միջոցին կը գտնուէր Աղթամարայ անարժան կաթողիկոսն: Փաշան ժողովրդական յուզումէն ազդուած՝ կը ստիպուի ոճրագործ Գրդերէն երկուքն ձերբակալել, անշուշտ չուտով արձակելու դիտաւորութեամբ: Կը ձերբակալուին վարագայ վարդապետներէն երկուքն ալ: Երեք աղջկանց մին, Սանոն,

հազիւ տուն հասած, տանջանքներու մէջ կը մեռնի:

Նոյն թերթէն նաև կ'իմանամք թէ Պուլանըխի Համգաչեխ գիւղի բոլոր տներն (30) իսլամութիւն ընդունեն են՝ հարստահարութեանց չթուժալով: Նոյնպէս մահմետականացեր են Ալաշկերտի Եօնճալու գիւղացիք (իբր 70 տուն): Խնուսի մէջ անցեալ գարնան վերջերն Հայոց ու Բըրդաց միջեւ կռիւ է տեղի ունեցեր, յորում երկուստեք սպաննուածներ ինկած են բայց մեծաւ մասամբ Բրդեր են ըսպաննուած:

—Բնիկ Հասգիւղցի Սարգիս էֆ. Մ. Մինասեան, որ ժամանակէ մը ի վեր Ամերիկայի Պրուքլին քաղաքին մէջ հաստատուած է, փափաք յայտներ է 700 ոսկինոց խանութ մը, որ կը գտնուի Ղալաթիա, նուիրել Հասգիւղի եկեղեցիին, հասոյթը ներսէսեան վարժարանին յատկացուելու պայմանով: Կտակաց Հոգարարձութիւնը հարկ եղած գործողութիւնները կատարած և կալուածը սոյն եկեղեցիին վրայ դարձուցած ըլլալով, այդ կտակն հաղորդեց Տնտեսական խորհուրդին, վաւերացման գործողութիւնը կատարուելու համար:

ՄԱՍԻՍ



SECOND HAND BICYCLES

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԵՄԵԼԱՆԻՒՆԵՐ

Այնպէս կը մորթոգնոք որ մորի պէս կ'երևի և կը վաճառենք այն գնով որ մեզի արժած է՝ վասն զի չենք ուզեր զալ եղամակին պահել զայնս: Հեծելամեքներն կրնաք հոս գործածել և ապա տանել ձեր սիրելի հայրենիքն:

L. M. Ալեքսանդր, L. M. Alexander
191 front st. worcester Mass.

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ, աժան եւ պատուական պիտի գտնէք մեր խանութն, հատն 20, 25, 30, սէնթի: Նաեւ պատի թուղթ: Հրամայեցէ ի

250 Main ST. (Մէյն փողոց)

WORCESTER MASS.

Ձրանք Հօէի մթերանոցն

Ո՞ր Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս: Իմ անդունտ Հաշանս է, և խանութս կը գըտնուի Ֆրոնթ սթրիթի 60 նիւմէրոն: Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ: Ո՞վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՞վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կոշիկներն փորձէ:

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

Բժիշկ ԿՈՆԻԿՈՎ

Պատիւ ունի յայտարարել Պօսթընի Հայ Հասարակութեան, որ ինքն բժշկական ուսումն աւարտած լինելով Զուիցերիոյ մէջ և ժամանակ մի Փարիզ բժշկականէն յետոյ եկած Ամերիկայ և Պօսթընի Հաստատուած է, շատ հմուտ է վարակիչ ախտեր բժշկելու մէջ, ու իր պաշտօնատեղին կը գտնուի

361 Harrison Avenue

Office hours; 8—10 A. M. 1—3 & 5—7 P. M.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողը պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն: Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար Հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գա իէ եանի, 1891, գին 1 թալէն կամ 5 ֆր ք:

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԻՇԻՔ Յ. ԷՔԻՂԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան
Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու շահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերէն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն: Անոնք որ կը կարօտին ըստակ դրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկեր, Չիմիշկէզէկ, Չունքուշ, ընդհանուր շրջականերով, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու:

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Ք Ե Ղ Ե Ք Ո Ր Մ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
չափաւոր գնով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՐՈՐՄ

286, 77 Էվինիու Նիւ Եորք
267 և 277 Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1 տողար 50 սէնթ կամ 7 ֆր. 50ս:
Բ. տարի 2 տողար կամ 10 ֆրանք

ԾԱԽՈՒ ԱՐՈՐՈՒԿ

Տաճկաստանէն գալած ամենաընտիր և խիստ ախորժելի ձայն ունեցող մանաւանդ Արևելեան եղանակներու ներդաշնակ՝ նոր Արմօնիկ մը ունիմ զոր ծախելու մտադիր եմ, որոյ համար լաւ տեղեկութիւն և գինը հասկնալ ուզող անձինք թող թղթակցին սա հասցէով:

KRIKOR

643 BOX P. O.
olneyville, R. I.

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

Ը.Օ.Գ.ԵՅԻՆ ՓՈԽԵՂԻՐԸ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէս, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդը կ'ընդունին հազար թալէս, եթէ պայմանն հազար թալէսի է, կամ մինչև հինգ հազար թալէս, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէսն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

HOPKINS & ATKINS
PATENTS
Washington, D. C. 20
years' experience
write for information

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն գի մէկ գին միայն ունի, բայց շափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է

385 Մէյն Փողոց, Ուուսթըր,
385 Main St. Worcester, Mass.

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ առանց քարի, և միանգամայն մաքուր ու ըմտիր պուլղուր կը վաճառենք, փառնալը 8 ունի միայն, կանխիկ վըճարելի:

Նիւ Եորքի և Ճէրզիի Հայերն եթէ 25 փառնալ աւելի գնելու լինին փոխադրութեան ծախքը մենք յանձն կ'առնուինք վճարել: Իսկ ուրիշ քաղաքաց մեր յաճախորդներն առնուազմ 50 փառնալ գնելու եմ փոխադրութեան ծախքէ ազատ մնալու համար:

Փորձեցէք մեզ և գոհ պիտի ըլլաք:

H. KOURKJIAN & S. HAUVSEPIAN
BERGENLIN AVE. COR. Humboldt st:
UNION HILL N. J.

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ Հայ հասարակութեան թէ իմ վերայիշեալ խանութին մէջ կ'օշիկներ և բըպլըներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ Հայ հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻՈՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանք
Զերդ Բանտօլ

THE WORCESTER MECHANICAL
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷԲԷՆԻԻՍ ՍԷՅՎԻՆԿՍ ԳԷՆՏ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս գնել վերայիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը տարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր կէսէն հաշուելով:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ